№ 158 Օգոստոսի 26 (Սեպտեմբերի 7) 1881 Օգոստոսի 26 (Սեպտեմբերի 7) № 158

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաբաղաքացիք գրվում են ստղգակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր թուին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Շամախուց։ Նամակ Ղուբայից։ Նամակ Խմբագրից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Հայոց խընդիր։ Ֆրանսիա։ Անգլիա։ Թիւրքիա։ Նամակ Աւստրիայից։ Արտաքին լուրեր — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՕԱՏՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Զախաու պրոֆէսսորի յօդուածը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

—

Օգոստոսի 13-ին

Շնորհակալութեան զգացմունքը չէ թողում ինձ լռել հասարակական այնպիսի գործիչների վերաբերութեամբ, որոնք լուռ ու մունջ գործում են յօգուտ ազգի, առանց մի որ և իցէ ակնկալութիւն ունենալու։

Իրաւ է, ճշմարիտ գործունեայ մարդիկ կարօտ չեն քաջալերութեան, բայց երբ որ դէպի նրանց այդպիսի աշխատութիւնը անտարբեր է մնում հասարակութիւնը, գոնէ վատուն, ուստի այս մի քանի տողովս կամենում եմ շամախեցոց զգացմանց թարգման լինել, որ նոյնպիսի վատութիւն և մեր գործիչներին չը պատահի։—

Շամախին էլ ուրիշ քաղաքների պէս ունի մի օրիորդական ուսումնարան։ Ահա 12 տարի է, որ այդ ուսումնարանը պահպանում է մի բարձանրդական ընկերութիւն, որ և եղել է սկզբնապատճառ այդ ուսումնարանի հիմնարկութեան։— Մեր ուսումնարանական պատմութեան մէջ մեկ դէպք է այն, ուր հասարակութեան պարտաւորութիւնը յանձն են առնում կատարելու մի քանի պարոններ, ինչպէս Ալէքսանդրապոլի Սահականուշեան և Թիֆլիսի Գայանեան դպրոցները, բայց ինչպէս ամենայն հասարակական հիմնարկութիւն։

Շամախու սուրբ Սանդխաեան դպրոց էլ շատ արգելքների պատահեց, որոնց յաղթեց և մինչ այժմ իր գոյութիւնը ապահովեց մի քանի պարոնների միջնորդութեամբ։

Անցեալ 1880 թուին երբ ուսումնարանի շինութիւնը սկսված բաւական բարձրացած էր, չնչին պատճառներով երկպառակութիւն ընկաւ ընկերութեան անդամց մէջ, որով թէ շինութիւնը մնաց կիսատ և թէ ուսումնարանը քիչ մնաց փակվէր, բայց շնորհիւ մի քանի պարոնների, ինչպէս են պարոն Աղէքսանդր բէկ Լալայեանց և պարոն Յակոբ բէկ Նիկիտեանցի, ուսումնարանը դարձեալ ոտքի կանգնեց և կարողացաւ ամբողջ տարին չարունակվել և գոհացուցիչ քննութեամբ ուրախացնել հասարակութիւնը։

Շնորհակալութիւն մեծապատիւ պարոններին, մանաւանդ պ. պ. Լալայեանցին և Նիկիտեանցին, որոնք իրենց բարոյական և նիւթական օժանդակութիւնը չը խնայեցին մատաղ սերունդի կրթութեան համար։ Ցոյս ունենք, որ նրանք իրենց անչափաւոր գործունէութիւնը կը չարունակեն և առաջիկայ տարիները, աշխատելով ուսումնարանի շինութիւնը գլուխ բերելու և ապահովացնելու ուսումնարանը։—

Աղ. Տէր-Սահակեանց

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

—

Օգոստոսի 10-ին

Աւազակութիւնը մեր գաւառում օրից օր աւելի այժ է ստանում։ Յանդգնի կողոպտութիւնները, գողութիւնները և սարսափելի մարդասպանութիւնները դառել են գաւառիս բարոյական խնդիր։ Կարծես թէ այս վայրենի չարագործութիւնները իրանց գոյութեան համար քաղաքականութեան իրաւունք ունեն, կարծես թէ գերանք մեր կեանքի ամենահարաւոր պայմաններն են, առանց որոնց մենք չէինք կարող ապրել։ Սակայն նշանաւորն այն է, որ այս եղեռնագործութիւնները ոչ օրին չեն հետաքրքրում, ոչ օր դրանցով չէ զբաղվում։ դրանք այնքան յաճախ են կրկնվում, որ կատարելապէս սովորական, ցանկալի երեւոյթների բնաւորութիւն են ստացել։ Հաղիւ թէ չափազանցութիւն կը լիներ իմ կողմանէ, եթէ ասեմ, որ մենք, քաղաքացիք, պաշտաման դրութեան մէջ ենք գտնվում։ Քաղաքում ամենայն ինչ թանգացել է, այն պատճառով որ գիւղացիները վախենում են գալ քաղաք իրանց բերքերը վաճառելու։ Գիւղա-ամառանոցներում պարապողները քաղաքումն են բնակվում։ մինչև անգամ գիւղերումն էլ երկիւղալի է մնալ։ Որովհետև, բացի նրանից որ աւազակները օր ցերեկով կողոպտում են արքունի ճանապարհների վրա, նրանք նոյնպէս օր ցերեկով, յարձակմունքներ են անում գիւղերի վրա։ այսպիսի յարձակմունքներ կատարվեցան հետեւեալ երկու գիւղում՝ մէկը Զախչախլիում, որտեղ կողոպտեցին մի վաճառականի խանութը, միւսը Դաղալիում, ուր սպանեցին գիւղապետի օգնականին։ Աւազակների յանդգնութիւնը հասնում է մինչև անգամ այն աստիճանի աներկիւղութեան, որ կողոպտում են բնակիչներին քաղաքից չատ մերձակայ տեղերում։ քաղաքից $1^1/_2$ վերստ մերձակայութեամբ, Նորերումն, կողոպտվեցան երկու մասլահաձներ, որոնցից աւազակները խլեցին 450 ռ։ Այս ամսի երկուսին, Դերբենտ գնացող ճանապարհի վրա և քաղաքից ոչ հեռու, այն էլ պէտք է ասած որ մի և նոյն յայտնի տեղը, տեղի ունեցան 4 կողոպտումներ։ Նմանապէս վերև յիշված տեղը կողոպտումից ազատվեցան՝ դերբենտցի այգեգործ պ. Գ... և օրիորդ Ա..., որոնց ուղեցոյց կոզակները կռուել էին աւազակների հետ։

Քաղաքում մօտ 150 կոզակներ կան, որոնց բերել են տուել Շուշայից և Բաղուից կալանաւորվածների փախուստի առիթով։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 24 օգոստոսի

Ամսոյս 23-ին հրատարակվեցաւ Թիֆլիսի հայ-թարգմանական վարչութեան յայտարարութիւնը, ուր ի միջի այլոց յիշած է, որ բէպերտուարը կազմած կը լինի հայ-թատրոնական բեպերտուարի մասնաժողովի անդամներից—պ. պ. Ա. Յովհաննիսեանի, Գ. Սունդուկեանի և Ս. Արծրունու ընտրութեամբ և այլն։

Յաւօք սրտի յայտնում եմ, որ յիշատակած մասնաժողովը, ուր ես ևս անդամ լինելու պատիւ ունեմ, մինչև այսօր և ոչ մի նիստ չէ ունեցած, թէև սրա մասին քանիցս անգամ ինձ պարտաւորութիւն եմ համարած դիմելու նախ թատրոնական վարչութեան նախագահ իշխան Ամատունուն, քանի որ նա դեռ չէր ուղղորդված Կ. Պոլիս, և ապա պ. Ա. Յովհաննիսեանին, իբրև բեպերտուարի մասնաժողովի նախագահին։

Գաբրիել Սունդուկեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Օգոստոսի 24-ին Արծրունու թատրոնում հայոց սիրողների ներկայացումն եղաւ։ Ժողովուրդը չատ չէր թատրոնում «Հերկուլէս» վոդեվիլը բաւական լաւ է, բայց պէտք էր աւելի կենդանի կերպով խաղալ նրան։

—

ԹԻՖԼԻՍԻ հայոց մշական թատրոնական խումբը առաջիկայ սեպտեմբի համար, արդէն կազմակերպված է և ածիլուն հրատարակված է։ Տիկիններից նորերը հետեւեալներն են։ Հաչեաց, Մարի-Նվարդ և Փաչպեան-Տէր-Գրիգորեան։

—

Լրագիրները հաղորդում են, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրը, բարոն Նիկոլայ, որ այս ամառը իր կալուածքի մէջ էր անցել, Թիֆլիսից ոչ հեռու, այժմ կրկին ուղեորվեցաւ դէպի Ս. Պետերբուրգ։

—

Այս օրերս, ինչպէս մեզ պատմում են, հետեւեալ զզուելի անցք է պատահել Թիֆլիսում։ Մի օրիորդ ծանօթների մօտ է լինում։ Երբ երեկոյեան բոլոր հիւրերը նստում են լաւ խաղալու, ասենք ազգի մը զարգացման ու բարգաւաճման յատուկ աշխատութեանց ալ հիմերն են մնանդամայն։

Հայ ազգը իրարմէ յանչափս հեռի ու անջատեալ վայրեր և երկիրներ ցրուած, կործանելու ամենամեծ վտանգի ենթարկեալ է, և ի մօտոյս սա վտանգին, որ իւր տարբ ժողովուրդներէ չբրջապատեալ և կղզիացեալ մասերը, հայ ազգութեան համար կորուսեալ պիտի տեսնէ, Հազարաւոր և հազարաւոր հայեր, հայերէնը բոլորովին մոռացած, մնալիայն թիւրքերէն, քիւրդերէն կամ ուրիշ բարբառներ կը խօսին։ և հայ մը որ ալ հայերէն չը խօսիր, կէս հայ մէ միայն։

Զեմ ուզիր կանգ առնուլ ատ սա կէտի վրայ, թէ կրօնի, այսինքն Ս. Գրիգոր Լուսաւորչէն հիմնեալ քրիստոնէական ազգային կրօնի մոռութիւնը որ ստանման կարեւորութիւն ունի այս խնդրոյն մէջ, իբր ազգութեան մոռացումն և պահպանութեան միջոց, և կանգնիմ անմիջապէս լեզուին խնդրոյն։

Հայերը մէկ ազգային, ամենուն հասարակ, և ինքան հարուստ ոլքան զարգացման ընդունակ լեզու մը իրենց սեպհական լեզուն կոչելու երջանկութիւնն ունին։ Այս լեզուն գրական լեզու մէ, լեզու զրոյցներու, լեզու եկեղեցւոյ, լեզու դասական մատենագրաց, լեզու ի նախնեաց ժառանգեալ գրականութեան։

Բայց ինչպէս կը խօսի ոչ-դաստիարակեալ ժողովուրդը։ Ինչ վիճակի մէջ է ժողովրդական լեզուն։

Թէև մենք չեմք կրնար զմեզ հայ ժողովրդական բարբառներուն ծանօթ անձանց կարգը դասել, սակայն սա իրողութիւնը գիտեմք թէ ի հնուց անտի և դեռ այսօր իրարմէ մեծ հեռաւորութեամբ անջատեալ այն երկիրներուն մէջ ուր հայերէն կը խօսուի, ժողովրդական բարբառք գրաբարէն այնքան կը դանդաղին որքան իտալերէնը լատիներէնէ։ Միւս կողմանէ, սոյն բարբառք իակ իրարմէ այն ասպէսն կը տարբերին, որ երբեմն անկարելի կը լինի զմիմեանս հասկընալ։ Պոլսեցի, դէպ մոնցի և սպահանցի ոչ-դաստիարակեալ հայերը գժուարաւ միայն կրնան զիրար հասկնալ (եթէ հասկնան)։

Այժմ եթէ խնդիրը սա կէտին վրայ է թէ լեզուն ինչպէս գործածելու է որ Հայ ազգութեան յանուցք ամենէն աւելի օգտաբեր լինի, պէտք է նախապէս ընդհանուր կանոն մը, ընդհանուր սկզբունք մը յառաջ բերեմ հոս։

Լեզուն գործիքաւոր էութիւն մ'է (ein organisches Wesen)։ մեռեալ լեզու մը նախապատմական ժամանակներէն մնացած մահացեալ (ֆոսիլ) կենդանի մ' է։ Հայերուն գրաբար մեռեալ լեզու մ'է, ինչպէս հին յունարէնը, լատիներէնը, գոթերէնը *)։ Մեռեալ լեզու մը կենդանացնել անհնար է, ինչպէս անհնար է կենդանի լեզու մը մէկ հարուածով մահացնել *)։

*)—Լեզուի խնդրոյն վրայ մեր մէջ գրողներուն մինչև ցարդ դիրար չը հասկընալն յառաջ կուգայ, ըստ իս, սա նշանաւոր պարագայէ թէ անոնցմէ չատեր պարզապէս չեն գիտեր լեզուաց կազմական կեանքը, զոր ես ներքին կեանք պիտի կոչեմ, բաղդատմամբ արտաքին կամ պատմական կեանքին, որ միակ կը գրաւէ անոց ուշադրութիւնն։ Աշխարհաբարի դատը պաշտպանողներուն գլխաւոր գործը պէտք է լինի, և պիտի լինի, նախ միաքերը լուսաւորել այս հիմնական կէտի վրայ։ Ս. Բ.

*)—Հետաքրքրաշարժ է տեսնել ոմանց սուրբ զայրոյթն այս «մեռեալ» բառին դէմ, և այն մտացի բայց անհիմն փաստեր, որովք կը ճգնին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶԱԽԱՈՒ ՊՐՈՖԷՍՈՐԻ ՅՕԴՈՒՈՒԱԾԸ „ՓՈՒՆՋԻ" ՄԷՋ

—

Ի պատասխանի իւր մէկ պոլսեցի բարեկամի խնդրոյն, յօդուած մը գրած է հայ լեզուի վրայ պրոֆէսսոր օղլոր Զախաու հռչակաւոր գերմանացի լեզուագէտն, որ Բէրլինի իւնիվէրսիթէի լեզուաբանութեան և հին լեզուաց դասատու է և հայերէնէ ի զատ ասիական և ափրիկեան զանազան լեզուաց քաջամուտ գերմանիոյ կայսրը և Բէրլինի արքայական ակադէմիան, կէս առ կէս հայթայթելով նորա ծախքերն, ղրկեցին զինքն 1879-ին ի Սիրիա և ի Միջագետս, հին Տիգրանակերտի տեղն և աւերակները գտնելու համար, Պրոֆէսսորին այս խնդրոյն վրայ գրածները վերջին ատենին հմտալից և հետաքրքրական լինելուն, մանաւանդ հայոց համար, կուզեմք սորա վրայ ատենն խօսիլ, և այժմ այսքան մը պարտ կը համարինք ըսել թէ մեր մի քանի հեղինակաց և աշխարհագրաց հետ, Տիարպէքիրը Տիգրանակերտ կոչելը գլխովին սխալ է, ըստ նոր խուզարկութեանց *)։ — Տիարպէքիրը նախնեաց Ամիտան է **)։—իսկ Տիգրանակերտի գալով, այս քաղաքը, ըստ Զախաուի, պէտք է կառուցուած լինի Թէլ-Էրմէնի (Հայոց բերլուր) *) բարձանց վրայ, ուր աւերակաց և հրնուեանց հետքեր ալ կը տեսնուին դեռ։ Այս բլրին հարաւային կողմն սաստրոտը 200 հայտուներէ բաղկացեալ Թէլ-Էրմէն, կամ Թաղ-հայոց ալ կոչուած գիւղը կայ, և արեւմտեան կողմը, 5—10 վայրկեան հեռու, Քօչ-հիսար՝ քիւրտերու գիւղը։ Թէլ-Էրմէնի հայերն կաթոլիկ են, կրօնք պ. Զախաու։ Մէկ եկեղեցի և երկու քահանայ ունին և, Տարայի հայոց պէս, արաբերէն, քիւրդերէն կամ տաճկերէն կը խօսին և հայերէն բնաւ չեն գիտեր։ Թէլ-Էրմէն, որու քովէն կանցնի Զրկան գետը, Մարտիսէն շուրջ 2 ու. կէս ժամ հեռի է դէպի արեւմտեան հարաւ։ Պ. Զախաու իւր այս վերջին ճամբորդութեան միջոցին Պոլսոյ և զանազան գաւառաց հայերուն հետ ունեցած յարաբերութիւններովը, աշխարհարարի վրայ ունեցած հմտութիւնը աւելի ընդարձակ լինելուն, ամենայն իրաւունքութեամբ կը գրէ սորա վերաբերեալ իւր յօդուածը. զոր գերմաներէնէն ի հայ վերածելով, գրեթէ բառական հաւատարիմ թարգմանութեամբ, կը յանձնեմք ազգային քննասիրաց ուշադրութեան։

Հայոց գրաբարն ու աշխարհաբարը։ Երկու իրիր կան գլխաւորապար որ մեծագոյն ժողովրդական մը ազգութիւնը, վտանգի ատեն, փրկելու և պահպանելու զօրութիւնն ունին։— Միութիւն կրօնի, միութիւն լեզուի։

*)—Որպէս մի քանի անգամ գրուեցաւ Մասիսի մէջ, որ միշտ «Տիարպէքիր» կըսէ, և ոչ Տիգրանակերտ։ Ս. Բ.

**)—Դեռ կը մնայ թուրքերէն անունը, «Գարա-Ամիտ»։ Ս. Բ.

***)—Թէլ-Էրմէնի բառ մ'է, և բլուր կը նշանակէ։ Թէլ-Էրմէնի հայ-կաթոլիկ քաղ բնակչաց վրայ պ. Թրօթիրի մէկ տեղեկագիրը ժամանակին թարգմանած ենք Մասիսի մէջ։ Ս. Բ.

•ոիրդը չը կամենալով լռոսի խաղին մատակցել, բերել է տալիս մի ֆայտոն և կանենում է տուն գնալ։ Բայց կառապանը փոխանակ նրան տուն տանելու, տանում է Վէրա ասած թաղը։ Այդ տեղ մի զինուորից դուրս են գալիս մի քանի դիմակաւորված պարոններ, ընկնում են ֆայտոնի վրա, յափշտակում են խեղճ օրիորդին և բռնաբարում են նրան։ Մի քանի ժամից յետոյ ուշաթափված օրիորդին ոստիկանները բերում են իր տունը։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են որ այս բոպէիս տիֆը նշանաւոր կոտորածներ է անում այդ քաղաքում և նրա գաւառում։ Նոյն իսկ քաղաքում օրը երկու, երեք մարդ անպատճառ մեռնում են։ Դրա վրա ուշադրութիւն դարձնող չը կայ։ Քաղաքային երկու բժիշկները անոգ են։ Այդ բաւական չէ. թղթակիցը ասում է որ յայտնվել է նոյնպէս մի նոր, տարօրինակ հիւանդութիւն։ ողջ առողջ մարդը յանկարծ դեղնում վայրէ ընկնում, փետանում և կապտում է։ Տեղը և բկացաւը արդէն սովորական հիւանդութիւններն են Հին-Նախիջևանում։

—

Ցայտնի է որ ամբողջ Եւրոպայում և Ամերիկայում բժշկական գիտութիւնը դեռ չէ գրտել մի հնար, մի դեղ կատաղած շան կծելուց մարդիկներին բժշկելու։ Կատաղած շանից կծածը անբուժելի է համարվում և արդէն ինքն իրան դատապարտված է մահվան։ Բայց մենք վաղուց լսած էինք, որ մեր տեղական ժողովրդի, հայերի և վրացիների մէջ կան ժողովրդական բժշկական դեղեր այդ սարսափելի հիւանդութեան դէմ։ Այս օրերս մեր ընթերցամ պ. Ա. Ամիրխանեանց, գործով գտնցած լինելով Գորի, ծանօթանում է մի վրացի կալուածատիրոջ, պ. Շալիկովի և նրա ընտանիքի հետ։ Ցայտնվում է որ այդ ընտանիքում մի դեղ կայ կատաղած շան կծելուց։ Այդ դեղը ամենահասարակն է։ Պէտք է վեր առնել կանաչ, թափանցիկ չէջի ապակի, փոչի դարձնել նրան սանդի մէջ մանր ծեծելով նրան, յետոյ դարձեալ մաղել այդ փոչին շատ բարակ չորով (օրինակ կիսիա) որ բոլորովին բարակ ալիւր դառնայ և տալ հիւանդին երկու, երեք օր չարուհալ, օրը չորս անգամ, իւրաքանչիւր անգամ 6 թէ 7 գրամ այդ փոչից։ Մեր բժշկների ուշադրութիւնն ենք դարձնում այդ միջոցի վրա։

—

Ստացանք «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի համար պ. Ֆ. Տէր-Գրիգորեանից 4 ռուբլի։ Առաջվայ փոդերի հետ կանի 62 ռուբլի։

—

Ստացանք «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի համար պ. Ֆ. Տէր-Գրիգորեանից 4 ռուբլի։ Առաջվայ փոդերի հետ կանի 62 ռուբլի։

—

Ստացանք մի գրքոյկ հայերէն լեզուով որ նորերումս հրատարակվեցաւ Թիֆլիսում, Մ. Բոանենանցի և ընկ. տպարանում։ Գրքի վերնագիրն է «Հայաստանի սուլը և Էջմիածին»։ Հեղինակութիւն Արմենակ Սիւնիի։ Գրքոյկի սկզբում մի պատկեր էլ կայ։ Գինը 30 կոպէկ է։

—

Ս. Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ Ս. Պետերբուրգի Նախկին քաղաքապետ գենեռալ Բարանով, նշանակված է այժմ Արխանգելսկ նահանգի նահանգապետ։

—

Ներկայ ամրողջ ամառը Թիֆլիսում մինչև յուլիս ամիսը հով էր, մինչև անգամ ցուրտ էր և շատ անձրևային էր։ Իսկ բուն ամառային շաբերը սկսվեցան միայն օգոստոս անսից և մինչև այժմ շարունակվում են, չը նայելով որ նորերումս մեծ անձրև էր եկել։

—

«Кавказъ» լրագիրը հաղորդում է որ չուտով գիտաւորութիւն կայ մտցնել կօջոր ասված տեղում քաղաքային ինքնավարութիւն։ Այդ ամբանոցում ամեր կամ կալուածներ ունեցողները կընտրեն իրանց միջից 10 ձայնաւոր, որոնք կընտրեն քաղաքագլուխ։ Որովհետև կօջոր, քանի գնում է, աւելի նշանակութիւն է ստանում թիֆլիսցիների համար, այդ պատճառով ցանկալի է որ այդ ամբանոցի տեղը կառավարվի իր սեփական դումայի միջոցով և այդպիսով ինքն հոգայ իր հասարակական և տնտեսական ամենանհրաժեշտ պէտքերի մասին։

—

Լրագիրները հաղորդում են, որ հոկտեմբեր ամսին կը դումարվի Ս. Պետերբուրգում 20 անձերից բաղկացած մի յանձնաժողով, որոնք կանչված կը լինեն, որպէս էկսպերտներ զանազան նահանգներից, Ռուսաստանի մէջ հարեցութեան ախտը նուազեցնելու խնդիրը քննելու համար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

—

„Journal d'Orient" լրագրի № 34 մէջ տպվեցաւ մի ընդարձակ յօդուած, հայոց խնդրի վրա, որի հետ մենք, ահա, ծանօթացնում ենք ընթերցողին։

Եւրոպայի պետութիւնները, ցանկանալով հաստատել արևելքում մի յայտնի կարգ, որ կարողանար հաստատ ապահովութեան գրաւական ներկայացնել, ինչպէս և Բայազետեան թերակղզու վրա, իրանց հայեացքը դարձրին Փոքր-Ասիայի այն մասի վրա, որ հայոց ցեղի օրօրոց է։ Ինքն Բ. Դուռը զըգաց անհրաժեշտութիւնը չը թողնել այդ աշխատասէր, արդիւնաբերող և խելացի ազգութիւնը այն թշուառ դրութեան մէջ, որի մէջ նա գտնվում էր, հեռացած լինելով Եւրոպայից և նրա ներկայացուցիչներից։ Աւելորդ է պատեղ խօսել հայոց ազգութեան այն մասէ վիճակի վրա, որ չէ թողել իր հայրենիքը, աւելորդ է նոյնպէս համեմատել նրա դրութիւնը այն մի միլիոն հայերի հետ, որոնք բնակվում են Անդրկովկասում։ Բաւական է որ Բ. Դուռը համաձայնվեց Սան-Ստեֆանօի դաշնագիրը ստորագրել, որ պահանջում էր հայերով բնակված երկրի վարչութեան բարւոքումը, բաւական է որ նա ճանաչեց պարտաւորութիւնը պաշտպանել հայերին քիւրդերի դէմ,—դրանով նա արդէն հաստատեց և խոստովանվեց որ հայերը տանջվում են այն անմխիթար դրութեան մէջ, հարստահարված լինելով քիւրդ վայրենի ցեղերից։

Հայերը չեն պահանջում առանձին գոյութիւն, կամ քաղաքական անկախութիւն, նրանք խնդրում են միայն հասարակական ազատութիւն, իրանց գոյութիւնը, իրանց կայքը, իրանց կանանց և աղջիկների պատիւը ապահովող հիմնարկութիւններ, վերջապէս խնդրում են ապրելու իրաւունք։ Եթէ 1840 թուին թիւրքիայից հայերին տուած իրաւունքները ճշմարիտ գործ դրված լինէին, այդ աշխատասէր ազգը վաղուց է կը ծաղկեցնէր իր երկիրը և կը բազմանար թող մեկ փկայ լինի որ Երևանեան նահանգում երեսուն տարվայ ընթացքում հայերի թիւը կրկնապատկվեց։

Հայոց ազգութիւնը երախտագէտ է դեպի սուլթանը և նրա նախորդները, նրանց բարի ցանկութիւնների համար։ Բայց եթէ այդ բարի ցանկութիւնները ապարդիւն եղան, եթէ հրատարակված բարենորոգումները չը գործադրվեցան,—այդ այն պատճառով է, որ նրանց գործադրելը յանձնվեցաւ մի տեսակ պաշտօնեաների, որոնք կամ չէին հասկանում նրանց նշանակութիւնը, կամ չէին տեսնում նրանց անհրաժեշտութիւնը, կամ վերջապէս ընդդէմ էին այդ բարենորոգումների իրագործմանը կրօնական համոզմունքից և անձնական հաշուից թելադրված։ Այդ պատճառով ինչ բնաւորութիւն և ունենան այն լէֆօրմները, որ պետութիւնները պարտաւորութիւն կը համարեն տալ այդ խելացի ցեղին, որ բնական միջնորդ պէտք է դառնայ արևելքի և արևմուտքի մէջ,—նախ և առաջ չը պէտք է մոռանալ որ բոլոր լէֆօրմները ապարդիւն կը լինեն, եթէ զգուշութեամբ չը նայվին այն պաշտօնեաները, որոնք կանչված կը լինեն նրանց իրագործելու։ Սկզբնական պայմանն ամեն աջողութեան նոր հիմնարկութիւնների համար, դա մի գլխաւոր նահանգապետի նշանակութիւնն է այնպիսի շրջանից, որ բոլորովին ոչինչ կապ չունենար հին պաշտօնեաների հետ, այսինքն քրիստոնեաների շրջանից, և որովհետև խնդիրը Հայաստանին է վերաբերում, որին պէտք է նշանակել մի հայ ընդհանուր նահանգապետ։ Ինչ ազգութեան ու բարոյական գաղափարների և պատանի այդ բարձր պաշտօնեան, իզուր կը լիներ սպասել որ նա եռանդով և լուրջ կերպով իրան նուիրէր ծանր գործին, եթէ ամեն օր զգալ կարելիութիւն զրկված լինել իր պաշտօնից։ Սուլթանը, իր գաշնական առաջին ճառի մէջ յայտնեց որ կայսերութեան գլխաւոր չարիքներից մինն այն է, որ պաշտօնեաները շատ հեշտութեամբ արձակվում են իրանց տեղերից։ Ուրեմն իր հպատակների շահը աչքի առնելով, նա կարող էր իր հայոց նահանգներին տալ մի նահանգապետ որ ապահոված կը լիներ, թէ կը պահպանի իր պաշտօնը վեց կամ եօթ տարվայ ժամանակամիջոցում։ Ընդհանուր նահանգապետի ընտրութիւնը լինելով բոլոր լէֆօրմների առաջին պայմանը, պետութիւնները Սան-Ստեֆանօի դաշնագրի 16-որդ յօդուածի զօրութեամբ, որ վերացվեցաւ Բերլինի դաշնագրի 61-որդ յօդուածով, կարող էին, առանց սուլթանի

Ակէ կը հետեի թէ Ս. Գրիգոր Լուսաւորչի լեզուն 19-դ դարու հայերուն համար նոյն կարևորութիւնը ունի՝ ինչ որ Սիկերոնի լատիներէնը իտալացւոց համար, Ուլֆիլասի գոթերէնը գերմանացւոց համար, և թէ նոյնչափ անմոռութիւն կը լինի գրաբար լրագիր մը տալ հայ գիտնականի մը ձեռքը, որքան երբ ուղղի իտալացիի մը լատիներէն լրագիր կարդացնել *)։

«Արդ՝ եթէ հին լեզուին վերակենդանութեան ճամբան փակեալ է, ինչ կերպով կրնան ուրեմն հայերը ընդհանուր լեզուի մը տեր լինիլ, որ թէ գրականութեան և թէ կենաց սովորական պիտոյիցը ծառայելու յարմարութիւն ունենայ. Ասոր պատասխանեմ.

Նոյն եղանակով, որով իտալացիք և գերմանացիք։

Այս ազգաց ակզբնական լեզուները Թոսքանայի և Սաքսոնիայի ժողովրդական բարբառները (դիալէկտ) են, որոնք յընթացս դարուց միայն մէկ տոմմի մը բարբառ է, ամեն տոմմերուն, բոլոր ժողովրդեան լեզուներն եղան, քանզի այս երկու նահանգները դաստիարակութեան և քաղաքակրթութեան մէջ ամեն ուրիշները գերազանցելով նոցա վրա տիրողական ազդեցութիւն մը բանեցուցին։

Արդ՝ այս սկզբունքը հայերուն լեզուին մասնաւորելով հետեւեալ արդիւնքը կը ստանամք.

1. Կղզիացեալ ժողովրդական բարբառները չեն կրնար փոխակերպիլ ի գրական լեզու, որ ամբողջին շահուն համար ալ բաղձալի բան մը չէ։

2. Եթէ հայ ժողովրդին տուեալ է լաւագոյն պայմանաց ներքև զարգանալ, այն երկրին լեզուն, ուր կը գտնուի ազգին մտաւորական կեդրոնը, պիտի լինի ազգային յարաբերութեանց և բոլոր ազգին կրթեալ մասին լեզուն, առանց սակայն բնաջինջ ընելու ժողովրդական բարբառները, որոնք, ինչպէս յայտնի է, նաև բարձր գերմաներէնին (Hochdeutsch) և իտալերէնին ընդհանուպ ծաղկափթիթ կը շարունակեն իրենց կեանքը։

Առ այժմ հայոց մտաւորային կենաց ամենէն նշանաւոր կեդրոնը Կ. Պոլիսն է, կեդրոն, որ կարելի է փոխարինել այլոց։

Մենք ներկայ պարագային մէջ Պոլսոյ կրթեալ հայոց խոսած և գրած լեզուն կը նկատենք իբրև միակ տիրող լեզու, իբր ազգային լեզու ապազային։ Ուստի սոյն պոլսեցւոց աշխատութիւններէն և իրենց աշխատութենց մտաւորական արժէքէն միայն կախեալ է լեզուին ճակատագիրը։ Պոլսոյ կրթեալ հայերը պէտք է իրենց լեզուին միջոցաւ ճառեն ամենուն, նոյն իսկ իրենց ամենահեռաւոր հայրենակիցներուն, և տան կենաքին ու մտածութենց վրայ իրենց ոգւոյն, իրենց բարձր կրթութեան կնիքը դրոշմելու համար ամեն ջանք ի գործ դնեն։ *)

Կրթեալ պոլսահայոց բարբառը, որ կը ճգնի արդէն ի մշակութիւն, փութով իր նպատակին հասցնելու շատ միջոցներ կան։

1) Արտասովոր հարուստ գրաբառէն կընայ շատ փոխառութիւն լինիլ ներկայիս գիտոյիցը համար, այսինքն մի միայն բառարանական նիւթ և առանձին բառեր, քանզի մեռեալ լեզուի մը միւս տարրերը՝ հոլովում, խոնարհում, համաձայնութիւն, և այլն, անհնար է վերստին ի կեանք կոչել *)։

2) Գրական լեզու մը մեծ ազգի մը ամեն պահանջմանցն և պիտոյիցը ճշդիւ պատասխանելու համար, կրնայ մասնաւոր բարբառներէ ալ քիչ մը բառեր փոխ առնուլ, ինչպէս ըրած են նաև իտալերէնն ու գերմաներէնը։

Ի վերջոյ սա ևս կուզեմ դիտել տալ թէ գրական և ժողովրդական լեզուները երբէք նոյնը—(իդան տիք)—չեն և ոչ ալ կրնան

Պոլսոյ հայոց քաղաքակրթութեան հետ անունց լեզուն ալ տարածուի իրանց հեռաւոր ազգակցաց մէջ։

Ս. Բ.

*)—Ոմանք ի նկատ առնելով այն պարագայ թէ համաձայնական կարգով աշխարհաբարը չատ կը մօտենայ գրաբարի, կը կարծեն թէ ներելի և կարելի է վերակենդանացնել մեր նախնեաց լեզուին քերականական և համաձայնական բոլոր կարգերն ու կանոններն։ Արդ. պէտք է գիտնալ թէ մեր աշխարհաբարը քաղաքակրթական արդի պիտոյից համեմատ մշակուելով, ոչ այնչափ գրաբարի, որչափ Եւրոպական կենդանի լեզուաց ընդհանուր օրէնքին կը մօտենայ, որ է օրէնք վերլուծական լեզուաց։ Ուշադիր դիտողի մը համար, աշխարհաբարն այնքան ունի մեր գրաբարի համաձայնական կարգերն, որչափ ֆրանսերէնինը կամ անգլիերէնինը։ Անշուշտ այս պատճառաւ է որ գրաբարի հետ Եւրոպական լեզու մ'ալ գիտցող անձինք լոկ գրաբար գիտցողներէն աւելի լաւ կը գրեն աշխարհաբարը։

Ս. Բ.

*)—Այսպէս զարգացած են ամեն նոր լեզուներ, և այն պարագայ թէ Կ. Պոլսոյ հայերը գաղթականութիւն մ'են, և բուն հայրենեաց հողին վրայ չեն բնակիր, ազդելիք մը չէ որ Կ.

լինիլ։ Դայչ գիտացին, որ իր շուրջը եղողներուն հետ միայն իւր բարբառը (դիալէկտ) կը խօսի, դպրոցի, եկեղեցւոյ և ընթերցումի միջոցաւ գրական լեզուն հասկնալու և զանի գործածելու կը վարժուի։ Այսպէս կամուրջ մը շինուելով ժողովրդական և գրական լեզուաց միջև կեցած վէնի վրայ, ընդհանուր միջոց մը կը գտնայ, որով բոլոր ազգը գիրաց կը հասկնայ։ Առանց դպրոցի, եկեղեցւոյ և ընթերցումի չը կայ ընդհանուր ազգային լեզու։

Ճշմարիտ է որ ընդհանուր ազգէն ընդունված գրական լեզուն, կրթեալներուն լեզուն կրնայ խիստ զանազան կերպիւ արտասանվիլ, զորօրինակ, վիէննացին յոյժ ալաչէ կը կարդայ և կը խօսի բարձր գերմաներէնը քան գերմանացին. ասի ամենեին վնաս չունի. Բնաւ պատերազմ չունի թէ թիֆլիսցի մը Սամարկանդցի լրագիր մ'այլապէս կարդայ քան Զէյթունցի հայ մը։ Պահանջելին միայն սա է, և ասոր ցի հայ մը։ Պահանջելին միայն սա է, և ասոր միայն ուշադրութիւն է, որ ամբողջ ժողովրդին մէն մի մասերը հասկնան ամեն ինչ որ իրենց նկարագրութիւն։ *)

Բերլին յունիս 81 Ի. Ջ. ԶԱԿԱՅԻ

—

*)—Բայց այս կարգի գիտնական զգուշութիւնք կրնան մեծ արժէք չունենալ այնքան այժմ սուտ, որոց վրայ ես յոյսեր կան։ Առ այժմ պէտք եղածն այս է որ ամանվան ապրիլ անցնին, և ի ընէ եռանդոտ զբաղեցնեն, որք աւելի տաքցած կրնան լինիլ պարզին, մինչև այն առեն անոնց մէջ տեղ կրնայ բացուել քիչ մ'աւելի լուրջ մտածութենց համար.... Ս. Բ.